ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի

Որոշում N 1/753Ա

31/10/2018

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԱՐԵԿ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՍԵՑՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է՝» կետը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145 Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1-ի 194-րդ և 226-րդ կետերը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 26.09.2018թ. թիվ 1/670 Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 26.10.2018թ. թիվ 85 ԾՕՀ Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (31.10.2018թ. արձանագրություն թիվ 43) և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 30.08.2018թ. միջնորդագիրը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերսկսել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամի պաշտոնում Նարեկ Բեգլարյանի գրանցման կասեցված ժամկետը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամի պաշտոնում գրանցել Նարեկ Բեգլարյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
ՄՈՒՏՔ ԹԻՎ 6323
«03» 11 2018